




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ


ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական
և Մանկավարժական



1902 ՓԵՏՐՈՒԱՐ 20 — ԹԻԻ 12

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ





Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

10 ՓԵՏՐՈՒԱՐ 1902



ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

Հանրագիտակ իր հաստատած գրական թէ գիտական ՄՐՑԱՆԱԿԻ գրութեան համաձայն՝ հրատարակեց Le Prix d'Excellence (Գերազանցութեան Մրցանակը) մակագրաւ ֆրանսերէն լեզուով թէ գրով գեղեցիկ ու գոյաբերիկ ոտանաւոր բանաստեղծութիւն մը։ Ընթերցող կամ բաժանորդ հմուտներէն ո՛վ որ լաւագոյն կերպով զայն հայացնէր, պիտի արժանանար եւ ինքն ալ խոստացուած արժանաւոր մրցանակ-պարգեւի մը։

Հանրային պատուոյ այս վարձատրութենէն ա՛լ աւելի՝ լաւագոյն թարգմանողը կամ հայացնողը պիտի ստանար գրական թէ լեզուագիտական կամ հայաբանութեան քաջանիշ տիտղոս մ'աւելի, որ ամէն նիւթական վարձատրութիւններէ գեր ի վեր բարոյական գնահատում մը պիտի լինէր ան։ Առիթ մ'էր աս եւ գործնական ապացոյց մը որքան հասկցնելու՝ նոյնքան եւ հասկնալու համար հրապարակաւ թէ՛ ֆրանսերէն լեզու հայերէն գրականութիւնը մինչեւ որ աստիճան խնամօք կ'ուսանին ուսանողք ու կ'ուսուցանեն ուսուցիչք, եւ իրենց ջանքերը՝ հապարումէկ զոհողութեամբ, հոգածութեամբ պատկերը կամ վճարելը ստանձնող դպրոցներ, կրթական մարմիններ, ծնողքներ կատարած են իրենց պարտքերը։

Հրապարակային մրցումներ տեսակ մը ժողովրդային քննութիւններ են, որ վարժարաններն իրենց փակարան կամ բանտարան պատերէն եւ անկիւնի կամ սենեկի հըմտութիւնները իրենց ծակուծուկերէն դուրս քաշելով, զանոնք իրենց խորհրդաւոր քողածածկումէն մերկացնելով իրենց խկութեան մէջ երեւան հանելու համար։ Այո՛, մեր իմացական կամ գրագիտական առաւելութեանց կամ թէ տկարութեանց կարողացոյց աստիճանները չօչափելի, գործնական թէ տեսողական յայտնելու համար։ Մինչեւ ցարդ՝ Պոլսէն թէ դաւառներէն ֆրանսերէնին հայերէն արձակն ու ոտանաւորն ի միասին կամ միայն անոնցմէ մէկ մեզ յղող վարժարանաց ուսանողներուն գրուածները, որոնք իրենց դպրոցական պաշտօնէութեանց կամ կրթական հաստատութեանց գրական հայելիներն են, զի, ինչպէս զաւակին մէջ՝

ծնողքը, նոյնպէս եւ աշակերտին մէջ վարպետը կը տեսնենք, հոգեբանօրէն կամ ընդհանրապէս. մի քանին պիտի հրատարակենք առ ի քաջալերութիւն։ Անշուշտ Գերազանցութեան մրցանակին մասնակցող ամէն հայ թարգման մրցումի ջանք մ'աւելի բերելու փափաք մը աւելի պիտի ունենայ իր գրածը Հանրագիտակի մէջ հրատարակուած տեսնելու, եւ անով իր գրական տաղանդը փայլուն կերպով ցոյց տալիք պարծանաց հաճոյքը վայելելու համար։ Կը յարգենք ու միշտ ոչ միմիայն պիտի պատուենք իրենց այդօրինակ բարենախանձ ջանքերն ու փափաքները, այլ զանոնք պիտի փառաքենք՝ գրողները շփացնելու չափ, բայց պայմանաւ որ Լիւսիէնին պէս Գերազանցութեան Մրցանակին արժանանալիք ուսումնական ջանքերն ու անոր երախտագիտական զգացումներն ըլլան իրենց փափաքի իտէալը։

Ուրախ ենք որ մեր գաւառացի ուսանողներ իրենց Պոլսեցի դասընկերներուն նախանձը շարժելու եւ անոնց օրինակ հանդիսանալու չափ կտրճօրէն աշխատած են գրական այս մրցումին մէջ։ Աշխատութիւն որ պատիւ կը բերէ գաւառաց մեր բազմաւաստակ ու չարքաշ ուսուցիչներուն, որոնք իրենց գրական բոլոր տառապանաց մէջ՝ կ'արիւնքան իրենց գրական ու կրթական բարոյալիր գործունէութեանց մէջ տոկուն ու աննկուն կամքով։ Մեր Պոլսեցի փափկասուն ուսուցիչք եւ ուսանողք ալ ոչինչ ընդհատ աշխատած կամ աշխատիլ տուած են Գերազանցութեան Մրցանակին կամ Պարգեւին արժանանալու համար թէեւ, սակայն կը յուսանք թէ գալիք գրական մրցումին առթիւ, ինքզինքնին՝ իրենցներով միասին քիչ մը աւելի երեւուն ցուցնելու համար ջանագիր կ'ըլլան։ Գրական կամ լեզուաբանական սոյնօրինակ բաղդատակի մրցումներ չատ մը անծանօթ տաղանդներ ի վեր պիտի հանեն։ Պոլսոյ եւ Գաւառի հայ ինտելիկենցիակն մէջ ռամիկ խտրականութիւնը դնելու այսպանելի թէ աններելի դիտումը կամ տգէտ նախապաշարումը չունինք, որովհետեւ ինչպէս Աստուածը՝ նոյնպէս եւ լոյսը ամէնուն համար է, թէեւ բնութեան պէս միջավայրերն ալ ունենան իրենց ներգործող ու ներշնչող եղանակներն ու կլիմաները։ Բացառութիւնները մենաշնորհումներու պէս օ-

րէնք ու տեւականութիւն չեն:

Հանրագիտակի այս մրցումները իրենց մէջ կը պարունակեն ա՛յնքան հանրագոտ դասեր, որքան բնական ազդակներ ու ներգործումներ: Թերեւս մեզ աչառու համարին ոմանք ասոր կամ անոր թարգմանութիւնը աւելի նախամեծար համարուելուն, ուստի զրկուած մրցադրերէն կարելի եղածին չափ պիտի հրատարակենք:

Հանրագիտակ բայ բեմ մըն է մամուլ ու խելքի աշխարհի մէջ. ո՛վ որ կը հաւատայ թէ խելք ունի. թո՛ղ փորձէ:

Ահաւասիկ անուններն անոնց՝ որք մասնակցած են Հանրագիտակի դրական մրցումին, իրենց գրութիւնները մեր ձեռքն հասնելու թուականին կարգով: Հասկնալի եւ զնահատելի է անշուշտ մասնակցողաց միջավայրերու հեռաւորութեանց տարբերութիւնը, եւ, անորմէ կ'եզրակացնենք դրական նախանձախնդրութեան աստիճանը:

1. Վ. Գարագաշեան. Սամաթիա, (ոտանաւոր) աշակ. Ս. Սահակեան Սանուց վարժ. 2. Վահան Համամեան եւ Հայկ Օ. Պէրպէրեան, Օրթագիւղ, (ոտանաւոր), Սչակ. Կեդր. վարժ. Ա. կարգի:

3. Նու Մէն. (արձակ), տեղը անյայտ:

4. Աշոտ Յ. Պազպաղեան. (արձակ), Աֆիոն Գարահիսար:

5. Գ. Մ. Թէլլաեան, (ոտանաւոր եւ արձակ). Սիս:

6. Գ. Մ. Է. (ոտանաւոր), Մանիսա:

7. Տիգրան Պոլաթեան, (արձակ), Մէլզրէի Կեդր. վարժ. Բարձր. կարգի աշակ:

8. Աստուածատուր Զանիկեան. (արձակ) աշակ. Իրբանուսեան վարժ. Սմասիա:

9. Յարութիւն Ն. Նիկողոսեան, (արձակ) աշակ. Իրբանուսեան վարժ. Սմասիա:

10. Կարապետ Մ. Զէրչեան եւ Վահան Իսպէշեան, (ոտանաւոր), աշակ. Հայկեան վարժարանին Կեսարիոյ:

11. Միհրան Պաթիթիարեան եւ Յովհաննէս Կ. Շիրիկեան (ոտանաւոր), աշակերտք Հայկեան վարժ. Կեսարիոյ:

12. Լ. Յ. Զէլվեան, (ոտանաւոր) աշակ. Հայկեան վարժ. Կեսարիոյ:

13. Յակոբ Պ. Մարտինեան, (ոտանաւոր) աշակ. Հայկեան վարժ. Կեսարիոյ:

14. Յ. Ղազար տեան, (ոտանաւոր) Նիկոմիդիա:

Սոյն ցանկէն դիւրին է հասկնալ թէ Կեսարիա միշտ աւելի պիտի ունենայ ինչպէս գործնական նոյնպէս եւ խնայական հրապարակին վրայ մարդ թէ տղայ մրցողներ: Անշուշտ Պոլսոյ այլ եւ այլ թաղերու, ինչպէս եւ ամէն դաւառի դպրոցականներ պիտի սիրէին իրենց անուններն ալ արձանագրուած տեանել սոյն ցանկին մէջ, որ պատիւ է իրենց համար խնամք ու հոգ տանող թէ՛ ուսուցչաց, թէ՛ ծնողաց եւ թէ իրենց երկիրներու կրթական մարմիններուն: Երկրորդ Մրցումին առթիւ կրնան իրենց փափաքներն իրագործել, ինչպէս վերի խորհրդածութեան մէջ բացատրուած է. այս Մրցումը բաւականէն աւելի պերճախօս կերպով ի վեր կը հանէ մեր դպրոցաց մէջ հայ եւ օտար լեզուաց ուսուցման մասին եղած ջանքերը: Ամէնուն դրածներէն չորս հատը (ոտանաւոր) դրինք այս անգամ, եւ իրենց պիտի թողունք դատաւտանը թէ՛ ո՛րն իրենցմէ արժանի է խոստատուած պարգևին:

Յաջորդ թիւով պիտի հրատարակենք արձակներէն մի քանին:

ԱՐՄԷՆ

ԼԱՌԱԳՈՅՆ ՄԻՅԱՆԱԿԸ

Թողանք վրայ միշտ գուրգուրացող
Ամէն օր դպրոց զայն առաջնորդող
Այլ չիկա՛յ սիրուն պապը յոյժ արի
Որ շատ գեթած էր ու շատ ալ բարի:
Իբր վերջին խօսք, երբ կը մնանէր ինք
Տուած էր անուն իր անուն պզտիկ:
Փոքրիկ Լիւսիէն, այն մահէն ետք, ա՛լ
Սկսաւ սովորիլ, աշխատիլ, խո՛յալ,
Աւելցուց ջանքերն, անդուլ, անդադար,
Ու եղաւ ընտիր տղայ մը անպար:
Դասատու, ծնողք, զոհ ու զարմացած
Այս փոփոխումէն շատ ուրիշ սցած
Դիտէին տղուն յառաջդիմութիւն,
Պատուոյ արժանի ժիր աշխատութիւն:
Ու ահա հասաւ օր մրցանակի,
Բաշխման տղայոց, օրն է վարձրի.
Լիւսիէն հպարտ, ուրախ ու գուարջ
Կանգնած է հպարտ լուռեան մէջ արդ
Ու կ'առնէ ազուր երեք մըցանակ
Եւ ոսկեղէն ալ սիրուն մէկ պանակ.
Ի՛նչ երջանկութիւն, ծնողք զինք գրկեն
Ու խնձոր այտերն տար տար համբուրն:
— Այսօր գնայ ալ քիչ մը պտղոտէ
Կ'ըսեն, ծառայիդ հետ շաղակրատէ.
Վաղը մանք կ'ելլենք ուրախ, զուարթուն
Ու կ'եղանք գնել, մայրդ, ես ու զուն

Խաղալիկներէդ մէկը քու հաւնած :
Ձեռ ուզեր անոնք փոխել անկասկած
Մըցանակներուդ հետ քուկին շահած :
— Ո՛հ, չե՛մ, չեմ ուզեր զատուիլ անոնցմէ :

Ու երբ իրիկուան տուն դարձաւ ոտքով
Ոսկի պսակը չկար տղուն քով :
— Մայր, ըսաւ տղան, գուարթ, ժպտերես,
Գերեզմաննոցը զացի հիմայ ես ,
Ու հոն ես դրի պսակս ոսկի
Ծիրիմին վրայ պապուս սիրելի,
Ու ծնրադրեցի մարմարին վրայ
Ըսի . « Քեզի համար ես աշխատեցայ » ,
Ու կարծեմ մայրիկ, այս խոստումս իրեն ,
Մեծ ուրս խուճիւն պիտ'առնէ նորէն :
Մայրը շփացած իր զաւկին վրայ
Առաւ, սեղմեց զայն իր կուրծքին վրայ
Ու իր յուզումէն ծայնով մը մոլոր՝
Ըսաւ . « Կ'օրհնեմ քեզ, ո՛վ սրտիս հատոր ,
Թէ՛ ինծի համար եւ թէ քու մեծ հօր . . »

Սամաթիա

Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՄՐՅԱՆԱԿ ՔԱԶԱԼԱՌԻԹԵԱՆ

Պապն որ իւր փոքր Լիւսիէնին երես կուտար,
Երբ աշխատէր տալով դրամ առատաբար :
Պապն որ դըպրոց կ'առաջնորդէր չարաճըճին,
Երեք ամիս կայ մեռած է : Իր խօսք վերջին
էր նրկատմամբ իր սիրելոյն , որ իր պարտքին
ձրգնի մահէդ վերջ, ու կըրկին եռանդագին,
Գերազանցէ նախանձորդքն : Հայր, մայր, վարժապետ,
Ա՛լ կը մոռնան խեղ աշխոհեմ՝ Լիւսիէնն ու մայէտ,
Յաջողութիւն իւր դիտելով զոհ ու հիացած :
Ինքն անվրկանդ, երբ կը հասնի օրն պարգեւաց,
Կը լսէ նա մէջ լըռութեան խորհրդաշատ,
Բաջալերուի յատուկ պսակին ոսկիապատ,
Եւ քաջօրէն մըցումն ըրած երեք սիրուն
Գրեանց իրեն սահմանուիլը, սըրտով պընծուն :
Ի՛նչ յաջող բախտ . . . Ծնողքն հիացմամբ զինք կը
զըրկեն ,

Իսկ խինդ սրվուէ ինք, իրաւամբ հըպարտ ելքէն :
Մայրիկը եւ ես, կը յարէ հայրն, մանչ իմ աղուոր,
Տուն կը դառնանք, դո՛ւ մամիկիդ հետ ժուռ եկուր :
Վաղ՝ առաւօտ, երեքնիս մէկ վաճառատուն
Մը կ'երթանք մեծ, քեզի սիրուն
Ընտրել երկու խաղալիկներ գեղեցկաշէն,
Արժանիքիդ իբրեւ յարմար մի փոխարէն :
Մըցանակներդ . . . կարծեմ վըրադ կըել չես ուզեր :
— Ո՛հ, ի՞նչ կ'ըսես, ես յայնց զատուիլ չեմ ուզեր դեռ

Իրիկուան տուն գայ, մանուկն առանց ոսկի պսակին
— Մայր, ոսկեայ պըսակս տանելու խնդ պապիկին ,
Գերեզմաննոց զացի այսօր ծընրադրեցի
Վըրայ իր շիրմին՝ ծաղկապայծառ Նայսպէս ըսի :
« Պապ իմ, սիրոյդ համար, սիրոյդ, աշխատեցայ » :
Տեսնե՛ս, յուսամ, այս գործս իրեն հաճոյք տի տայ :

Սեղմեց մայրիկն, դէմքը զաւկին սիրասընունդ
Վըրայ իր սըրտին, զայն փայփայեց, եւ սրտաճունդ
Մի յուզումով պատասխանեց . « Կ'օրհնեմ, որդեակ ,
Ես ինքս ըզրեզ, թէ պապուդ , թէ իմ փոխանակ » :

Սիս

Գ. Մ. ԹԷԼԼԱԼԵԱՆ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ

Մեծ հայրը որ իր պզտիկ Լիւսիէնի երես կուտար շատ
Եւ զայն կ'ողողէր — երբ լաւ կ'աշխատէր — սուե-
րով առաւ :

Մեծ հայրը որ իր փոքրիկ բզէզը դպրոց կը տանէր՝
Մեռած էր ա՛լ եւ արդ անցեր էին երեք ամիսներ :
Իր վերջին խօսքը իր սերելիին համար եղաւ լոյս :
Նա ալ այս մահէն ի վեր զինք ուսման տուաւ մըջ-
տահոգ ,

Կրկնեց իր ջանքեր եւ զլեց անցաւ իր մըցակիցներ :
Իր ուսուցիչներ եւ իր հայրն ու մայր ա՛լ չէին տես-
ներ

Իրենց երեքմնի այն չարաճըճին ու կը դիտէին
Գոհ ու հիացիկ յառաջդիմական քայլերն մանուկին :
Մաքնաւ չեղուցաւ ու մըցանակի օրը բաշխումին
Կը լսուի ձօնուիլն խոր լըռութեան մէջ ոսկի պը-
սակին ,

Որ կը շնորհուի ընտրելագոյնին, նաեւ տրուեցան
Երեք ալ զրքեր, որք էին իրմէ պաշտպանուած այն-
քան :

Ի՛նչ երջանկութիւն, իր ծնողքն զայն գրկեն սիրագին
Եւ ինք կը խայտայ, հպարտ իր արդեանց արդար
վաստակին :

— « Պառաւ դայեակիդ հետ, ըսաւ հայրը, գնա դուն
պզտիկ ,

« Պտոյտ մ'ընելու, ես ու մայրդ տուն պիտ' դառ-
նանք այժմիկ ,

« Եւ վաղն առտու մի մեծ վաճառատուն երեքնիս
կ'երթանք

« Գնելու աղուոր երկու խաղալիկ քեզի վարձ որդեակ ,
« Սա ալ խորհիմ թէ չես ուզեր կրել քու մըցանակը ,

— « Ոհ, այո՛ , նաեւ զատուիլ անոնցմէ : Ի՛նչ չեմ ալ
ուզեր » :

Եւ մանուկն իր'կուն դարձաւ առանց իր ոսկի պը-
սակին ,

— « Մայրիկ, ես զացի գերեզմանատուն, ըսաւ ժըպ-
տագին՝

« Տանելու համար հէք մեծ հայրիկին պսակս ոսկեայ
Եւ ծնրադրելով անոր ծաղկոտած դամբանին վրայ ,

« Ըսի թէ միայն քեզ համար է որ լաւ մ'աշխատեցայ
« Եւ կ'զգամ թէ մի հաճոյք պիտ' ըլլայ իրեն համար

սա » :

Կը բռնէ մայրը իր սրտին վրայ սիրուն դէմքն անոր
Կը փայփայէ զայն եւ կը համբուրէ աչք արտաս-
ւաճոր ,

Եւ իր սիրելոյն կը պատասխանէ յուզմամբ որդահար
« Որդեակ, կ'օրհնեմ քեզ թէ՛ մեծ հայրիկին եւ թէ՛ ինձ
համար » :

Մանիսա

Գ. Մ. Է.

ՄԲՅԱՆԱՆ ԸՆՏԻՆԵԼԱԳՈՑՆԻՆ

Մեծ հայրիկն որ պզտիկ Լիւսիէն կը շփացնէր, երբ կ'աշխատէր, կը շռայլէր առատ սուեր, Մեծ հայրիկն որ կ'ընկերանար իր տղեկին երբ ան կ'երթար դպրոց. մեռաւ: Իր խօսքն վերջին Ուղղելով իր թոռնիկին: Որ այնուհետեւ Աշխատեցաւ միշտ, անժանձիր եւ յարատեւ: Ուսուցիչ ու ծնող անոր վրայ կը հիւանան Փոխուած, շտկուած, խելօք ու ժիր տնոնելով զայն: Այսպէս ամէն ոք գտնէ, զի Լիւսիէն լաւ կ'աշխատի եւ չը վհատիր: Կուգան օրեր մրցանակի, եւ անդիէն, լուռեան մէջէն, յառաջ կուգայ, եւ կ'ստանայ, քաջի բաժին, պսակ ոսկեայ: Ասկէ զատ ալ նաեւ երեք զրքեր անգին: Ծնողք յուզուած կ'ողջագուրեն զայն անձկագին: Ինք զիտակից արժանիքին հպարտ կ'զգայ, « Ծեր աղախնոյդ հետ պտտել գնա՛, տղայ » Կ'ըսէ հայրիկն: Մայրիկը ու ես պիտ'դառնանք տուն, Պիտի երթանք վաճառատուն մը վաղ առտուն: Ընտրելով քեզի փայլուն սիրուն խաղալիկներ Պարզեւներդ հետդ տանիլ չ'ես ուզ'ր: » « Օհ, չեմ կրնար զատուիլ անոնցմէ տակաւին »:

Տղան կուգայ, պսակէ զուրկ երեկոյին, « Մեծ հայրիկիս գերեզմանը գացի այսօր, եւ իմ անգին ոսկի պսակ տուի անոր: Ու ծնրադիր իր ծաղկափիւռ շիրմին վրայ, Բեզ համար է որ, ըսի, լաւ աշխատեցայ: Աս' կարծեմ, չէ՞, հաճոյք պիտի առնէ իրեն » Կը գրկէ մայրն սիրուն պատկերն եւ յուզմունքէն Դողահար. « Ես զքեզ կ'օրհնեմ մեծ հայրիկին՝ եւ ինձ համար » կը յարէ նա սրտագին:

Կեսարիա Վ. Պ. ԻՍՊԷԼԻՆԱՆ Կ. Մ. ՁԵՐՁԵԱՆ

ԱՌ ՈՐԴԵԱԿ ԻՄ ՅՈՎՀԱՆՆԵՍ(*)

Ոսկի եւ արծաթ չունիմ, բայց
ինչ որ ունիմ, ա՛յն կուտամ քեզ:

Սիրելի Յովհաննէս,

Տակաւ կը մօտենայ ժամանակը որ ես պէտք է ճամբայ իյնամ, ճամբայ մը՝ ուրկէ մարդ չկրնար վերադառնալ այլ եւ: Չեմ կրնար քեզի հետ տանիլ, կը թողում քեզ աշխարհի մը մէջ ուր աւելորդ բաներ չեն բարի խրատները:

Մարդ իմաստուն չէ որ կը ծնի. ժամանակն ու փորձառութիւնը ամէն բան կը

(*) Նամակ մը, զոր 18րդ դարու զերման դասական հեղինակներէն Մատթիաս Գլաուտիոս գրած է իր տղուն:

սովորեցնեն մարդուն եւ կը մաքրեն կալը:

Աշխարհքը ես աւելի վայելած եմ քան թէ դուն: Ոսկի չէ, սիրելի որդիս, ամէն ինչ որ կը վայլի. տեսած եմ շատեր որոնք ոչնչացած են եւ շատ նեցուկներ, որոնց յաճախ մարդ կը վստահի՝ կործանած են:

Ուստի կ'ուզեմ քանի մը խրատներ տալ եւ ըսել քեզ ինչ որ ես մտածելով զտայ եւ ինչ որ ժամանակը սորվեցուց ինձի:

Մեծ չէ ինչ որ բարի չէ, ճշմարիտ չէ ինչ որ հաստատուն չէ:

Մարդ աշխարհի վրայ այնպէս չէ ինչպէս իր տանը մէջ. ինչ որ հոս կը հագնի չկըրնար դուրսը հագնիլ: Բեզի շրջապատող ամէն առարկայ կ'անցնի կ'երթայ, բայց անգիտակցաբար. մինչդեռ մարդս գիտակից է իր անձին եւ կը նմանի հսկայ մնայուն որմի մը, որուն վրայէն ստուերները կը սահին կ'անցնին: Բոլոր իրերը կ'երթան կը հպատակին օտար կամքի մը եւ զօրութեան, իսկ մարդս անձնիշխան է եւ իր կեանքը իր ձեռքին մէջ ունի:

Մարդուն համար համարժէք չեն աջ կամ ձախ երթալ, վասն զի երկուքն ալ բոլորովին տարբեր կէտերու կ'առաջնորդեն:

Մի՛ կարծեր թէ այնչափ իմաստուն ես որ այլեւս պէտք չունիս ուրիշներու խորհուրդին եւ առաջնորդութեան:

Այս աշխարհքը մարդուն համար շատ անձուկ է. ան չտեսներ անտեսանելին եւ չի ճանչնար զայն:

Խնայէ անձդ դուր նեղութիւնէ, մի՛ ցաւիր ամէն բանի վրայ եւ անձիդ յարգը գիտցիր:

Չափազանց զգուշացիր չարիք ընելէ:

Մի կապեր սիրտդ անցաւոր իրերու:

Ճշմարտութիւնը չէ որ պիտի յարմարի մեզի, սիրելի որդե՛ս, այլ մենք պէտք է յարմարինք անոր:

Ամէն ինչ որ կրնաս տեսնել՝ տե՛ս, եւ գործածէ աչքերդ, իսկ Անտեսանելին եւ Յաւատենականին մասին փարէ՛ Աստուծոյ խօսքերուն, Աւետարանին:

Հաւատարիմ եղի՛ր քու հայրերուդ կըրօնքին եւ խոյս տուր աստուածաբանութեան վրայ տգիտութենէն վիճաբանողներէ:

Ուրիշներէն այնչափ մի վախնար որչափ քու անձէդ իսկ: Մեր ներսը կը բնակի դատաւորը որ չխաբեր եւ որուն ձայնը մեզի ա-

ւելի կարեւոր է քան թէ բովանդակ աշխարհի հաճութիւնը և Յունաց ու Եգիպտացեաց իմաստութիւնը: Այստեղ՝ որդեակ, անոր ձայնին հակառակ չգործելու ինչ որ կ'ուզես ընել, լաւ մը խորհէ, խոկա՛ և խորհուրդ հարցուր անկէ: Սկիզբը մեղմիւ կը խօսի ան և կը թոթովէ անմեղունակ մանուկի մը պէս, սակայն երբ անոր անմեղութիւնը յարգես, կը տեսնես որ անոր լեզուին կապերը հետզհետէ կը քակուին և ահա կ'սկսի լսելի անուշ ձայնով մը խօսիլ:

Զգիտցած բաներդ սիրայօժար սորվէ՛ ուրիշներէն, և ուր որ իմաստութեան, մարդկային բարօրութեան, լուսաւորութեան և առաքինութեան վրայ կը խօսուի, ուշի ուշով ականջ դիր: Սակայն անխտիր ամէն խօսքի հաւատք մի՛ ընծայեր, որովհետեւ ամէն ամպ որ երկնքին երեսը կը պատէ անձրեւ չունի անպատճառ: Շատերը ամէն նիւթի վրայ կը խօսին կարծելով թէ ամէնագէտ են. այդպէս չէ սակայն, որդեակ, բառեր են միայն: Զգուշացիր անոնցմէ որոնք յոխորտալով մեծ մեծ խօսիլ դիտեն. ծանրապէս բռնաւորուած կառքին ձիերը դանդաղ քայլերով միայն կրնան յառաջանալ:

Բան մի՛ սպասէր հապճէպով առաջ վազողներէ, եւ եթէ փողոցէն աղմուկ մը լսես, բոկոտն հեռացիր անկէ:

Եթէ մէկը իմաստութիւն կ'ուզէ սորվեցնել քեզ, երեսն ի վեր նայէ անգամ մը, և եթէ ուսեալ ու նշանաւոր մէկն ալ թուի, թող դայն և հրաժարէ անոր գիտութենէն: Մարդ ինչ որ չունի, չկրնար ուրիշին տալ: Ազատ մարդն այն չէ որ իր փափաքածը ընել կարենալ կ'ուզէ, այլ այն՝ որ կրնայ ընել ինչ որ պարտի ընել: Իմաստուն մարդը անիկա չէ որ կը կարծէ թէ գիտէ, այլ անիկա՛ որ վերահասու եղած է իր տգիտութեան և բուժուած է անկէ:

Եթէ իմաստունօրէն կարգադրելիք գործ մ'ունիս, փնտռէ՛ իմաստութիւնը, բայց ո՛չ քուկինդ. կոտրէ՛ քու կամքդ և համբերութեամբ սպասէ հետեւանքին:

Յաճախ սուրբ իրերու վրայ խորհէ՛ և ապահով եղիր որ այդ բանը անօգուտ չէ քեզ համար. կտոր մը թթու խմորի ամբողջ զանգուածը կը թթուեցնէ:

Մի արհամարեր որ և իցէ կրօնք, վասն

զի հոգիին կը վերաբերի ան, և դուն չես գիտեր թէ ինչ կրնայ պահուած ըլլալ անտեսանելի պատկերներուն տակ:

Շատ դիւրին է քամահրել, որդեակ, սակայն լաւագոյնն է հասկնալ:

Մի՛ սորվեցներ ուրիշներուն ինչ որ ինքդ չես սորված տակաւին:

Պաշտպան կանգնէ՛ ճշմարտութեան եթէ կրնաս, հոգ չէ թէ անոր համար ատելի պիտի ըլլաս շատերուն. բայց գիտցիր որ քու անձնական գործդ և ճշմարտութեան գործը մէկ չեն. եթէ ճշմարտութիւնը չահալւընդրութեամբ կը պաշտպանես, առանց վարձատրութեան կը մնաս:

Բարիք բրէ ուրիշին և հոգ մի ըներ թէ ինչ արդիւնք պիտի ունենայ:

Մէկ բան ուզէ, բայց ի սրտէ ուզէ:

Խնամք տուր մարմինիդ, բայց ոչ այնչափ՝ որչափ հոգիիդ:

Արդարախօհ եղի՛ր ամէնուն հանդէպ, քո՛ւ վրայ դժուարութեամբ վստահէ:

Մի խառնուիր օտար գործերու, բայց քու գործերդ փութաջանութեամբ կատարէ:

Մի չողոքորթեր ուրիշները և թող մի՛ տար ալ որ ուրիշները չողոքորթեն քեզի:

Պատուէ՛ ամէն մարդ նայելով իր դիրքին ու աստիճանին, և թող որ ինք ամէնայ եթէ արժանի ալ չէ այդ պատիւին:

Պարտական մի՛ ըլլար մէկուն բայց հաճոյակատար և մարդասէր եղիր ամէնուն հանդէպ, իբրեւ թէ ամէնքն ալ պարտաւոր ենք իրդ ըլլային:

Մի՛ բաղձար միշտ վեհանձն ըլլալ, բայց եղի՛ր միշտ արդար:

Մէկուն սիրտը մի ցաւցներ. եթէ արդարութիւն ընես, խղճահարութենէ զերծ կը մնաս:

Հաւատք մի՛ ընծայեր աւելորդ շարժուածքներով, շարժառիւթով խօսողներուն, և ինքդ ալ չափ դիր շարժումներուդ մէջ:

Սիրայօժար օգնէ՛, սուրբ եթէ ունիս, և ալ մի մտածեր ատոր վրայ. իսկ եթէ չունիս, դարձեալ հոգ մի ըներ և ունեցածովդ բաւականացիր:

Մի ըներ ամէն ինչ որ գիտես, բայց գիտցիր ամէն ինչ որ կ'ըսես:

Զգուշացի՛ր նանրակրօններէ. յարգէ բարեպաշտ և երկիւղած անձերը և աշխատէ անոնց օրինակին հետեւելու: Մարդ մը որ

Աստուծոյ ճշմարիտ երկիւղը կը կրէ իր սըրտին մէջ, կը նմանի արեւին, որ կը լուսաւորէ և կը տաքցնէ, թէպէտ չխօսիր ան :

Ըրէ՛ ինչ որ վարձատրութեան արժանի է, բայց մի բաղձար վարձատրութեան :


Եթէ նեղութեան մէջ ես և բանի մը կը կարօտիս, մի՛ տրտնջար ուրիշին, հապաղուն քեզ տրտնջա :

Միշտ բարի բան մ'ունեցիր մտքիդ մէջ : Երբոր մեռնիմ, փակէ աչքերս և մի՛ լար վրաս :

Մօրդ քով կեցիր և սպասուէ գինքը որ չափ որ ապրի, յետոյ թաղէ զայն իմ քովս :

Ամէն օր մահուան և կեանքին վրայ խորհէ զուարթ քաջութեամբ մը, և մի մեկնիր աշխարհէն՝ քրիստոնէութեան հիմնադիրին համար տաժած սէրդ ու մեծարանքդ առանց կերպով մը հաւատաւոր ըլլալու :

Զքեզ սիրող հայրդ ՄԱՏԹԻԱՍ ԳԼԱՌԻՏԻՈՍ
Թարգմ. Դեմմ. ՅԱԿՈԲ ՊԷՋԻՐՃԵԱՆ



ՁԵՌԱԳՈՐԾԻ ԿՈՂՈՎԸ

Գիւղ մը կար, ուր տեղի աղջիկները գուլպայ հիւսել չէին գիտեր : Ստոնցմէ շատերը, բոպիկ կը պաշտէին : Այն գիւղին գիւղապետը ի զուր խիստ հրամաններ հանեց որ աղջիկները վարժապետին կնոջմէն երթան գուլպայ հիւսել սորվին : ամենեւին արդիւնք չունեցան : Ոմանք այս գործին անյարմար կ'երեւային, ոմանք ալ ամէն տեսակ պատրուակ կը գտնէին՝ դպրոց չերթալու համար : քսան աղջիկէն մէկը միայն կանոնաւոր կերպիւ սորվեցաւ գուլպայ հիւսել :

Վարժապետը որ խելացի մարդ մ'էր, օրին մէկն ըսաւ .

« Ես անոնց ամէնքն ալ կ'ստիպեմ որ գան գուլպայ հիւսել սորվին : »

Կտոր մը գունաւոր թուղթ ու խաւաքարտ առաւ, գեղեցիկ ձեռագործի կողով մը շինեց եւ տուաւ այն աղջկան որ յաջողութեամբ գուլպայ կը շինէր : Այն ատեն բոլոր աշակերտուհիք փափաքեցան իրենք ալ մէյ մէկ այնպիսի կողով ունենալ : Բայց վարժապետն ըսաւ .

« Գուլպայ հիւսել սորվելնուդ պէս մէյ

մէկ հատ ալ ձեզի կուտամ, հիմա ամենեւին օգուտ մը չունի ձեզի : »

Այն օրէն սկսեալ, բոլոր աղջիկները ամենամեծ եռանդով սկսան գուլպայ հիւսել սորվիլ, եւ քիչ մը վերջը բազմութեամբ կ'անցնէին գիւղին մէջէն, իւրաքանչիւրն մէյմէկ գեղեցիկ կողով առած, կամ մարգագետնին մէջ ժողուուած գուլպայ կը հիւսէին : Անոնց իւրաքանչիւրն իր տունը գեղեցիկ ու օգտակար ձեռագործներով լեցընելէ զատ, մօտակայ գիւղերն ալ շրջելին, եւ առանց չափազանց աշխատելու, շատ ալ ստակ շահեցան, մինչդեռ առաջները, իրենց ժամանակը չաղակրատութեամբ եւ պարապ կենալով կ'անցնէին :



ԹԱՓԱՆՑԻԿ ԶՈՒԿԸ

Հնդկաստան հրաշալիքներու երկիրն է : բուսականութիւնը, հանքաքանութիւնը եւ կենդանաբանութիւնը իրենց զարմանալիքներն ունին այդ երկրին մէջ :

Պատկերն կը ներկայացնէ Հնդկաստանի փոքր ձուկ մը տափակ, զուրս ցցուած աչերով, փշալից թեւերով, և լայն ու խոշոր բերանով : Ասիկա նշանաւոր է իր թափանցիկ յատկութեամբ : իր մարմինին թեփերն այնքան կանոնաւոր և այնքան կարծր, ապակիի կտորներու նման թափանցիկ են և լոյսը անարգել կրնայ իրենց մարմնոյն մէջէն անցնիլ : Այդ նորոքինակ կենդանական ապակիին մէջէն դիւրաւ կրնաք տեսնել ձկան ներքին մարմինը, գործարաններու և խռիկներու ամէն մանրամասնութիւնները, որոնք կ'երեւին ուր գիծերու երեւոյթին տակ, բնծայելով գիտողին աչաց՝ բնախօսական տեսարաններուն ամէնէն գեղեցիկն ու հետաքրքրաշարժը :

Այս ձուկը կը բնակի Հնդկաստանի ձահիճներուն և ծովալիճներուն մէջ :

ՄԱԳԼՅՈՂ ԶՈՒԿԸ

Ձկան կեանքը զարմանալի է : կան ձուկեր որոնք ջուրէն դուրս ո՛չ միայն երկար ժամեր կրնան մնալ, այլ երկար օրեր՝ առանց անհանգիստ լինելու : Ոմանք չոր եղա-

նակին մէջ ճահիճներուն տիղմը իրենց բնական կ'ընեն, ուրիշներ՝ կը թողուն լիճն ուր ապրած են և ցամաքին վրայ կ'ելլեն նոր ջրալի բնակարան մը գտնելու համար։ Այս ձուկերը տարբեր բնատանիքներու կը վերաբերին։ Ամէնէն նշանաւորն է Անապաս կոչուածը որ մագլցող ձուկ մըն է։ Ասիկա կը գտնուի Չինաստանի, Հնդկաստանի անուշ ջրերու մէջ։ Երկայնութիւնն է 15 հարիւրորդամէդր. կը ճամբորդէ անձրեւէ թրջուած կակուղ խոտերուն մէջէն։

ցուցի հողագործի մը, երեկ ոչ մէկ հատ կար։

« Այն ատեն ինձ բացատրեց թէ՛ ինչ պէս գետերէն դուրս ելած էին և ճահիճներուն մէջ եկած էին։ »

1831ին, Սիամի մէջ գտնուող Ֆրանսացի արքայիսկոպոս մը իր վանատան համար այդ ձուկերէն բաւական մեծ քանակութիւնով գնեց. ամիսէ մը վերջ մեծ մասը ճահիճներէն կը փախչէր։ Փախստական երեք ձուկերը կը կոչուէին Բլա-ֆսօն, Բլա-օրլ և Բլա-



Թափանցիկ ձուկ

Հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք « Ճամբորդութիւն ի Սիամ » անուն հետաքրքրաշարժ գործէն։

Սիամի գետերուն, ճահիճներուն մէջ կան տեսակ մը ձուկեր որոնք խոտերուն վրայէն մագլցելով կ'անցնին։ Սաստիկ տաքէ մը ետքը որ կատարելապէս ցամաքեցուցած էր ճահիճն, ամբողջ օր մը անձրեւեց եւ հետեւալ օրն երբ դաշտ գացի, զարմանքով տեսայ ճահիճներու մէջ ցատկոտող ձուկեր։

« —Ուսկի՞ց եկան այս ձուկերը, հար-

-մօն։ Ասոնք խոշոր, շատակեր ձուկեր են. աղացման գործողութեան ենթարկուելէն ետքըն ալ, երկար ատեն կրնան մնալ. ամէն հիւանդութիւններու համար ասոնց միւսը օգտակար համարուած է։ Այս ձուկերուն քով պիտի աւելցնենք ուրիշ ձուկ մը, նշանաւոր, Անապաս կոչուած որ ծառերն ի վեր կը մաղըցի։ Զարմանալի է այս յատկութիւնը զոր տեսակ մը ձուկեր ունին եւ որոնց ստուգութիւնը յայտնելու համար հարկ կը համարինք յիշել հետեւեալ արկածներն։

Գնդապետ Տալգոսի տեսած է ի Հընդ-կաստան մագլցող ձուկ մը, ծովալիճի մը ե-զերքներուն վրայ աճող արմաւենիներուն ճիւղերուն յենած: Ծառին ոստերն կը ձեղ-քեր եւ փուշերուն կրթներով, կարող կ'ըլ-լար բարձրերը ելլելու:

Երկրորդ վկան անգլիացի պաշտօնատար մըն է որ կը խօսի Անուպաս ձուկին զարմա-նալի յատկութիւններուն վրայ եւ կ'ըսէ թէ՛ իր մարմինին ընդարձակուելուն ու կծկուե-լուն միջոցով կարող կ'ըլլայ ան մագլցիլ իր

լուղակները այնպէս կազմուած են որ ամէ-նամեծ դիւրութիւն ունի ծառերուն վրայ ել-լելու: մողէսի նման զարմանալի արագու-թեամբ մը կ'ելլէ ոստերու, որմերու վրայ: Երբոր օդը շատ գեղեցիկ, հանդարտ ըլլայ, այն ատեն ջրային բնակարաններէն դուրս կ'ելլեն, եւ ստուերին մէջ բնակիլ ա-մէնէն աւելի կը սիրեն: Չինացիք ու ճա-րօնցիք կ'որսան այդ ձուկերն եւ ժողովըր-դեան կը ներկայացնեն հետաքրքրական խա-ղեր կատարել տաով անոնց վրայ: Վերջապէս



Մագլցող ձուկ

բնակած ճահիճին եզերքներուն վրայ աճող արմաւենիներուն գագաթը կ'ելլէ, ուսկից առած է նաեւ Բառմէյ-եռի անունը որ կը նշանակէ « ծառերու վրայ ելլող »:

Այս վկայութիւններն ճշմարտանման են: Հետեւեալ տեղեկութիւնը կը քաղենք 1885 տարուոյ Փրանսերէն գիտական հանդէսէ մը:

« Անուպասի հասակին մեծութեամբ ու-րիշ ձուկ մը եւս կայ, որ ափրիկեան ծովե-րուն մէջ կ'ապրի թխազոյն, սեւ եւ սպի-տակ շերտերով ծածկուած է իր մարմինը իր

այս զարմանահրաշ կենդանիներն այնքան կը դիմադրեն մահուան, որ վաճառանոցը մըտ-նելէն վերջ իսկ, իրենց վրայ կենդանու-թեան նշաններ տեսնուած են: Առ'էք հատ մը կտրեցէ՛ք՝ եւ իւրաքանչիւր կտորին վրայ պիտի տեսնէք կենդանութեան նշանը: Անուպասի միսը համեղ է, բայց այնքան շատ չի փնտռուիր, որովհետեւ մարմինը չափա-զանց փշոտ է: »



ՔՐԶԱԼԱՐԱՔ ՄԸ

(Շարունակութիւն 11րդ թիւէն եւ վերջ)

« Գանի մը ժամ քալելէս ետքը եղբօրս բնակած գիւղը հասայ : Այս երկրին մէջ մեծ արտեր ու ագարակներ կային . ես անոնց մէջ զմայլած կը քալէի :

« Գեղեցիկ պարտէզի մը մէջ շինուած տան մը դրան առջեւ հասայ , երբ կ'ուզէի ներս մտնել ու եղբօրս բնակարանը հարցընել , շնորհքով կին մը՝ մաքուր հագուած , երեք պզտիկ տղոց հետ դուրս ելլելու կը պատրաստուէր , տղոց դէմքը խնձորի նման կարմիր էին . մօտեցայ անոնց և հարցուցի տիկնոջ թէ՝ « Ո՞ւր է գիւղապետին բնակարանը :

« — Ես անոր կիներն եմ . ըսաւ , անիկա վերն է , բայց քիչ ատենէն վար կ'իջնէ ճաշի երթալու համար :

« Սրտիս սաստիկ ուրախութենէն համարձակեցայ անոր տղաքը գգուել , և ըսի թէ՝ ես ձեր հօրեղբայրն եմ :

« Այս խօսքիս վրայ տիկինը պաղ կերպով մը զիս դիտեց : Նոյն միջոցին Գէորգ ալ եկաւ , և այնքան գիրցեր էր որ հազիւ կըրցայ ճանչնալ : Եղբայրս զիս տեսնելուն պէս վազեց դէպի ինձ և գրկելով համբուրեց : Միասեղ ճաշեցինք և գլխուս եկածները միառմի պատմեցի , վերջէն խնդրեցի եղբօրմէս՝ որ հաճի քովը պահել զիս իր տնտեսական գործերուն մէջ աշխատեցնելով :

« Եղբայրս վեհանձնօրէն ընդունեց . թէև կիներ քիչ մը դժուարութիւն ցցուց , բայց վերջապէս յանձնառու եղան որ այն տեղ մնամ :

« Ես միշտ կը ջանայի , եղբօրս կնոջը տիկին Մարիամին աչքին աղէկ երեւնալու , տղաքը դպրոց կը տանէի կը բերէի , ու յետոյ եղբօրս կ'օգնէի : Վերջապէս ինչ հրաման որ ընէին՝ անմիջապէս կը կատարէի : Հինգ ամիս անցեր էր յորմէ հետէ սոյն ագարակին մէջ կը բնակէի , ուր տեղ ձրի կ'ուտէի , կը պառկէի , բայց քուսկս մէկ ըստակ չէր մտնար , ու վրայի գգեստներս այնքան հինցեր էին որ ա՛լ հագնուելու բաներ չէին : Օր մը աղաչեցի տիկին Մարիամին որ բաճկոնիս պատռած տեղուանքը կարէ կարկտէ , ու ըսի նաև թէ՝ ուրիշ

բաճկոնի մը ու ջուխտ մը անդրադարտիքի կարօտ եմ , կը խնդրեմ որ եղբօրս գրուցէ՝ որպէս զի զանոնք գնելու համար քիչ մը դրամ տայ :

« Տիկին Մարեամ՝ բարկութեամբ պատասխանեց թէ՝ « Ամուսինը զաւակներ ունի և չի կրնար ոչինչ տեղը վատնել իր ստակը » : Ես՝ սաստիկ բարկանալով իրեն դէմ , ըսի թէ՝ « Հինգ ամիսէ ի վեր ծառայութիւն կ'ընեմ հոն , և թէ Գէորգին եղբայրն եմ ու սլարտական է օգնել ինձ » :

« Այն ատեն Մարիամ յանդիմանեց զիս դպրոցական վիճակիս սկսելով . հազար անգամ երեսս զարկաւ կերած հացս , և թէ բոլոր դժբաղդութեանցս պատճառն՝ ես ինքս եմ :

« Այն օրէն յետոյ եղբօրս կիներ կասկած ունէր վրաս , ու կ'երեւար թէ սովորականէն աւելի դոց կը պահէր մառանը , սնտուկները ու պահարաններն : Այս բանը խիստ ցաւ կուտար ինձ » :

Երբ քրջահաւաքը՝ իր անցեալ դժբաղդութիւնները յիշելուն վրայ՝ սիրտը ելլելով կուլար ու ձեռքերովը աչքերը կը սրբէր . Զարեհ կը մտածէր ինքնիրեն թէ՝ ինչ ողորմելի կացութեան մէջ կը գտնուի եղբեր տգէտ մարդ մը . մէկ մ'ալ տեսաւ որ հայրը կամուրջին կողմէն կուգար , իր ընկերին դառնալով՝ « Պէտք է որ փախչիմ , ըսաւ . վասն զի երբ հայրս զիս հոս տեսնելու ըլլայ , խիստ պատիժներ կուտայ , վաղը կէս օրէն յետոյ վերստին կուգամ հոս , եւ գունալ եկուր . կ'աղաչեմ , որ պատմութիւնդ աւարտես : »

Հետեւեալ օրն , նոյն ատեն քրջահաւաքը գետին եզերքը կ'աշխատէր քուրջեր հաւաքելու , Զարեհ եկաւ , ու աղաչեց որ պատմութիւնը շարունակէ : Քրջահաւաքն սկիսաւ իր պատմութիւնը շարունակել :

« Նոյն միջոցին ագարակին ու կալուածներուն տէրը գիւղ եկաւ . ես ալ շատ աղաչեցի եղբօրս որ զիս անոր ներկայացնէ , որպէս զի քանի մը դրամ պարգեւ առնեմ :

« Եղբայրս կատարեց խնդիրս : Կալուածատէրը որ նշանաւոր հարուստ անձ մըն էր , հանդէսներով ու հացկերոյթներով յաճախ կը պատուէր գիւղին երեւելիներն : Շատ անգամ զիս ալ իր քով կը կանչէր ու զանա-

զան յանձնարարութիւններ ընելով՝ քիչ շատ դրամական պարգեւներ կուտար:

«Քանի մը օր յետոյ, եղբայրս Գարթալ տօնավաճառի գացած էր. կալուածատէրն ալ Մալթէփէ երթալ ուզեց, ուստի կանչեց զիս ու տասը ոսկի եւ հաշուեցուցակ մը տալով ինձ ըսաւ. «Դարբինը կարելի որ կուգայ, նոր շինած վանդակափեղկերու դրամը առնելու համար. չեմ ուզեր որ խեղճ մարդը պարապն ելլէ, տուր այս տասն ոսկին ա՛նոր եւ ստորագրութիւն մը առ: Շատ ուրախ եղայ, որ ագարակատէրն ինձ այսպիսի գործ մը կը յանձնէ, առի՛ դրամն ու արհեստաւորին գալուն սպասելով՝ գիւղէն քայլ մը անդին չի հեռացայ:

«Ճաշէն յետոյ, երկաթագործին դործաւորներէն մին եկաւ, զանի իմ սենեակս տանելով ըսի. «Պարոնը Մալթէփէ գացած ըլլալով՝ պատուիրեց ինձ վճարել տասը ոսկին», ու իսկոյն համրեցի ու ստացադիր մը առի:

«— Դուն գիւղապետը չե՞ս, ըսաւ դարբինին տղան:

«— Ո՛չ, պատասխանեցի, ան Գարթալ տօնավաճառը գնաց:

«— Ուրեմն տուած անդորրագիրս ա՛ղէ՞կ է:

«— Աղէկ թէ գէշ. ինծի ի՛նչ. տէրս գիտէ հարկաւ:

«Տղան քովիծաղով մը (ուսկից պէտք էր բան մը գուշակել) քիչ մը մտածեց ու ըսաւ. «Տուած ստացագիրս օրինաւոր չէ, ես պէտք է որ քեզնէ առնելս նշանակեմ, քանի որ ստակները դուն տուիր»:

«Ըրէ՛ ուրեմն, ինչպէս որ կ'ուզես, իրեն տալով ստացագիրը, նեղանալով նաեւ իմ տգիտութիւնս անոր յայտնի ըլլալուն համար:

«Տղան հինգ վեց տող բան գրեց ու տուաւ ինձի, առջի թուղթը առնելով, դրամները քսակը դրաւ ու ելաւ գնաց:

«Երեք օր ետքը ագարակատէրը ետ դարձաւ, ու ես ալ մեծ գործ մը կատարողի պէս հպարտութեամբ մը ընկալագիրն անոր ներկայացուցի: Դեռ սիրտս դող կ'ելլայ, երբ միտքս կը բերեմ այն վայրկեանը: Ագարակատէրը՝ աչքերը թղթին վրայ տընկած կը պօռար. թէ՛ ինչո՞ւ համար այն 10

ոսկին դարբինին չի վճարեցի. — «Այո՛, տէր իմ, տուի՛, և այս թուղթը ընդունելութեան գիրն է»:

«— Ապո՛ւշ, մտիկ ըրէ՛, ի՞նչ գրուած է այս թղթին վրայ:

«Մեծապատիւ տէ՛ր.

«Լսելով որ ձեր մեծապատուութիւնը Մալթէփէ գացած է, առանց ինծի վճարելու երթալը ձգելու, եւ ո՛ր ժամանակ ձեզ գտնելս ալ չգիտնալով, ու միանգամայն գործատեղիս ալ շատ հեռու ըլլալուն՝ կ'աղաչեմ որ ձեր մեծապատուութիւնը ինձ իմացընել շնորհ ընէ, թէ՛ ե՞րբ կը բարեհաճիք վճարել այս գումարը: »

«Այս անիծեալ նամակին մէջի գրուածները բառ առ բառ միտքս մնացած է՝ մինչեւ այսօր: Շատ խօսքեր ըսի, եւ կրցածիս չափ աշխատեցայ համոզել զինքը, բայց ի դուր, հաւատալ չուզեց: Հետեւեալ առտու եղբայրս կանուխ սենեակս եկաւ ու ըսաւ թէ՛ «Պարոնը ինծի մէկ ոսկի ղրկելով՝ կ'աղաչէ որ անկից ելլեմ՝ եւ ուրիշ տեղ երթամ»:

«Աստուած չտայ քեզի այսպիսի ցաւեր, տղա՛ս, ու պէտք չէ ըսել որ եթէ կարդալ գրել գիտնայի, այն չարագործը զիս չէր կրնար խաբել: Ինչ որ է, տրտմութեամբ մեկնեցայ անկից ալ, առանց գիտնալու թէ՛ ո՛ր պատին քարին զարնեմ գլուխս:

«Բայց Աստուած, որ կը տեսնէր իմ անմեղութիւնս եւ ուրիշներուն անիրաւութիւնը, ուզեց քիչ մը բարիք ընել: Մտածելով միտքս եկաւ խանութպան կնքահայրս, իմ ամենասիրելի բարեկամը, անոր քով գացի, որ Բերա կը բնակէր: Իր խանութը գտայ՝ որ լաւ վիճակի մէջ էր, բայց սրունքները յօդացաւ ունենալուն՝ տունը հիւանդ պառկած էր: Բարի ծերունին շատ սիրով ու հաճութեամբ ընդունեց զիս, եւ զխոստ եկածները պատմեցի ամբողջապէս:

«Հաղուադիւտ է ճշմարիտ բարեկամութիւնը մարդերուն մէջ, Հանեց ինծի վաթսուն ոսկի տուաւ, ու պատուիրեց որ խանութ մը բանամ, հաց, աղած ձուկ, շաքար եւ ուրիշ նպարեղէններ ծախելու: Քանի մը տարիէն ծերուկ կնքահայրս մեռաւ, բայց ես իմ գործերս կարգի դրած քիչ շատ հանգստութեամբ կ'ապրէի:

« Բանի մը տարիէն ետքը ամուսնացայ պարկեշտ կնոջ մը հետ, եւ մտածեցի որ գործերս աւելի ընդարձակեմ. իմ ու կնոջս ունեցած գրամը 200 ոսկիի չափ էր, պատուական խանութ մը բռնեցի եւ քիչ շատ յաճախորդներ ունեցայ. բայց շատերը ինձմէ ապառիկ առնելուն, հետզհետէ խանութին ապրանքները քիչցան, որովհետեւ կարգալ գրել չգիտնալուս, անհնար էր որ միտքս պահէի թէ՛ ո՞վ էին իմ պարտատէրներս, և քանի՞ դրուշ տալիք ունին ինձի: Այն ատեն ուզեցի տղայ մը առնել քովս՝ որ հաշիւները գրէ, բայց աւելի գէշ եղաւ, վասն զի գիտնալով ան՝ որ ես չեմ հասկնար իր գրած հաշիւներէն, կ'աւելցնէր ու կը պակ-

աւելը, որ մեր տան մօտ եղած դպրոցը կ'երթայ: Լսելու արժանի է անոր գիտցած գեղեցիկ բաները, իրիկունը երբ ամէնքնիս կերակուրնիս կ'ուտենք, զուարճութիւն մըն է անոր ըսածները մտիկ ընել: Կ'սկսի նա պատահական երգը երգել: Ընթերցարանէն դասեր կը սերտէ. ու չի մոռնաւ ըսելու որ երբեմն իր Բրիտոնէականէն քարոզներ ալ կուտայ պղտիկ վարդապետի մը պէս, տանը կատուին ձագուկները գլուխը հաւաքելով: Չեմ ամչնար ըսելու թէ ես ու մայրը շատ բան կը սորվինք այն տղեկէն:

« Տե՛ս, հիմա ու մտածէ, զաւակս, գիտութենէ յառաջ եկած բարիքներն ու տըգիտութեան չարիքներն, եւ որովհետեւ դու



սեցնէր գէրօները իր ուզածին պէս: Վերջապէս չերկարեմ խօսքս, երկու տարին չանցած՝ բոլորովին սնանկացայ:

« Մեր պարտքերը վճարելու համար իմ ու կնկանս բոլոր ունեցածները ծախեցինք, միայն անկողին մը ու հին վերմակ մը մնաց մեզի:

« Անկէց ի վեր իմ դժբաղդ կինս առաւօտէն մինչեւ երեկոյ ուրիշներու ծառայութիւն կ'ընէ, ու ես ալ, ինչպէս կը տեսնես փողոցները կը թափառիմ աղտոտ քուրջեր հաւաքելու արհեստով:

« Մեր դժբաղդութեան մէջ միակ միութարութիւննիս է մեր վեց տարեկան զա-

ժամանակ ունիս սորվելու, ինձի պէս անբանօրէն մի՛ վարուիր, որ թշուառ ըլլաս: Լիդնետէ՛ նայիմ հիմա գրքերդ ու գործիչներդ գետը, ու գնա՛ սրիկա տղոց հետ պտըտէ:»

Աւելորդ է ըսել որ քրջահաւաքին պատմութիւնը շատ օգտակար եղաւ Չարեհին և հեռացաւ այն բարի մարդէն, չնորհակալ ըլլալով իրաւամբ, ու նոյն վայրկեանէն իր վարքն ուղղելով՝ սկսեց ուսման ետեւէ ըլլալ ու մեծնալով նշանաւոր անձ մը եղաւ:



ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԵՐ

ՃԱԲՈՆԵԱՆ ՅԵՂ

(Շարունակութիւն 11րդ թիւէն եւ վերջ)

« Բիթթօի մէջ գտնուած դղեակին շէնքերուն մէջ, այնպիսի շէնք մը կայ, զոր կրնանք քրմապետական ունկնդրութեան տաճար անուանել, վառն զի Բամիսներու կրօնքին շէնքերուն յատուկ եղող ճարտարապետական սուրբ ձեւովը շինուած է եւ անոնց պէս Միա անունը կը կրէ: Միքատօին բնակած տեղւոյն յենած, այդ շէնքը ծառատունկ եւ սալայատակեալ ընդարձակ գաւիթի մը մէջ կառուցուած է, ուր կուգան կարգ կարգ դասուիլ, մեծ հանդէսներու աւտեն, չքագիր ուղեկիցները:

« Այն առանձնակի տեղւոյն մէջ մտան յաջորդաբար Թայքունի հետեւորդները՝ ըք հոն կեցան եւ յետոյ Միքատօին չքագիրներուն առաջնակարգերը:

« Կիներն իրենց յարկերը քաշուեցան: Բուրմերու եւ վանականաց պատգամաւորութիւնք չըջափակեալ պատերուն առջեւ եւ հրապարակներուն մէջ լեցուած էին: Հեռուէն՝ Թայքունին հետեւորդները շարք մը ձեւացուցած էին, շէնքին ճակատը գտնուող լայն սանդուխին կից եղող քառուղիին եւ երկու կողմերը շարուած էին: Ասկից Միքատօյին հետեւորդներ, գետնաքարք քըղանքներով վերարկուներ հագած, դանդաղաքայլ իրարու ետեւէ կարգաւ կ'երթային եւ փառաւորութեամբ սանդուղէն վեր կ'ելլէին ու կը նստէին տեսակ մը նըստարանի վրայ, աջ ու ձախ կողմերն, իրենց երեսը մեծ սրահին գոցուած դուռներուն դարցնելով, նստելէ առաջ, կը փութային իրենց վերարկուին քղանցքը վեր առնել եւ անոր վարի կողմը նստարանին վանդակին վրայ ձգել, բազմութեան ցուցնելու համար այն փայլուն գէնքերն՝ որոնք նկարակերտուած էին: Քիչ ատենէն ամբողջ սրահը այս փայլուն զարդարանքով ծածկուած էր:

« Սակայն, շէնքին դէպ ի ձախ կողմը լսուած սրինգներու, ծովային խեցիներու եւ քրմապետական մատուռին տեսակ մը երգէհոններուն ձայնը, Միքատօին սրբատեղին

մտնալը կ'աւետէր: Ամենախորին լռութիւն մը կը տիրէր ամբոխին մէջ: Ժամ մը բարեպաշտ կերպով սպասեցին, մինչեւ որ ընդունելութեան պատրաստութիւնները աւարտեցան: Յանկարծ փողի մը ձայնը Թայքունին գալուստը կ'իմացընէր, որ ծառուղիին մէջէն ոտքով եւ առանց ուղեկիցներու կուգար: Իր պաշտօնեայները ետեւէն կուգային, ականածական հեռաւորութեամբ մը: Թայքունը վայրկեան մը մեծ սանդուղին ոտքը կանգ առաւ եւ անմիջապէս տաճարին դուռները բացուեցան: Վերջապէս սանդուղին աստիճաններէն վեր ելաւ եւ այն ատեն պարզուեցաւ այն տեսարանը որ բազմութեան ուշադրութիւնն առ կախ վիճակի մէջ ձգեց:

« Սրահին ցեղուէն կախուած հնդկեղէգի կեղեւէ մեծ կանաչ վարագոյր մը, իջած էր սեմէն երկու կամ երեք ոտք վեր: Այս նեղ անջրպետին մէջ, փսիաթէ եւ գորգէ անկողին մը կը նշմարուէր որոնց վրայ տաւածուած էին ձերմակ պարեգօտի մը լայն ծալքերն: Այսպէսով Միքատօն իր աթոռին վրայ երեւցաւ:

« Յանցակերպ հիւսուած վարագոյրէն ամէն բան կարող էր դիտել առանց տեսնուելու: Իր աչքը որքան հեռու որ պտտընէր, իր առջեւ ծունր դրած գլուխներու կը պատահէր:

« Տեսակցութեան արարողութիւններն վերջացան: »

Խաղմագիտութիւնն, Ճարօնի մէջ բաւական կարեւորութիւն ունենալով, մի քանի տեղեկութիւն պիտի տանք, ըստ Պ. Ումպերթի, զինուորաց, զինուց եւ հագուստներուն վրայ:

Պ. Ումպերթօ կ'ըսէ. « Պարզ զինուորները Աքուիի լեռանց բնակիչներն են, որոնք երկու երեք տարի ծառայելէ յետոյ իրենց տունները կը վերադառնան: Անոնց կապոյտ բամպակէ եւ ուներնուն վրայ վրայ գծուած ձերմակ ժապաւէններէ համազգեստը, սեղմ անդրաւարտիքէ մը եւ կարմիր շապիկէ մը կը բաղկանայ: Բամպակէ ներքին զանկապաններ, կաշիէ ներքաններ ունեցող սանտալներ կը հագնին ու մէջքերին գօտի մը կապեն, որուն մէջ մեծ սուր մը կը պահեն: Անոնց հրացանի պայուսակը, որ սուիններ կը պարունակէ, կամարով մը իրենց աջ


կողմէն կախուած է: Խաւաքարտէ սրածայր գլխարկ մը, զոր մինչեւ իրենց քունքերն կ'իջեցնէ, անոնց հագուստին ամբողջութիւնն կը կազմէ Յիշեալ գլխարկը կը զործածեն, պահակութիւն կամ վարժութիւն ըրած ատեննին:

Գալով ճարօնեան բանակին հրացաններուն բոլորովին իրարմէ կը տարբերին եւ քանի մը տեսակ հրացաններ կը գործածուին: Ծառօնի պատերազմի զինուորներուն հագուստը հետաքրքրական է, եւրոպական աւատականութեան զինուորական կազմաժին ամբողջութիւնը պահելու եւ անոր նմանելուն համար:

Սաղաւարտ, զրահ, գեղարդ, երկայլի սուր, ասոնք են զօրաց՝ զօրահանդէսի հագուստը: Սուսերամարտութիւնը ճարօնեան բանակին մէջ խիստ տարածուած է: Արք խիստ ճարտար են այս վարժութեան մէջ՝ որ իրենց կայտառութիւնը եւ ճարպիկութիւնը կը զօրացնէ: Կանայք իսկ կը պարապին սոյն վարժութեան: Ծառօնցի կանանց զէնքն է նիզակ մը, որուն ծայրը կոր երկաթ մը կայ: Կանայք զայն կը գործածեն կանոնաւոր ձեւերով եւ դիրքով: Արք դանակ ալ կը նետեն, բայց առանց զայն կապելու, ինչպէս որ կը նետեն Սպանիոյ մէջ:

Ազնուական ճառօնցիները, յոյժ զարդ կուտան իրենց զօրքերուն, անոնց սուրբերուն եւ թուրերուն որոց շինուածքը աննման է, երախակալին եւ պատեանին վրայ նուրբ կերպով փորագրուած ու քանդակուած մետաղեայ զարդեր կան: Բայց գլխաւորաբար այս սուրբերուն արժէքը բարձրացնողը, անոնց հնութիւնն ու հռչակաւորութիւնն է: Հին ընտանիքներու մէջ, իւրաքանչիւր սուր իր աւանդութիւնն, իր պատմութիւնն ունի:

Հակառակ այն աւանդական զէնքերուն եւ զինուորական կազմակերպութեանց, զոր Զինացի եւ Ծառօնցի ազնուականներն կը փութան դեռ տալ, հակառակ այն անարդանաց զորս կը ցուցնեն եւրոպական զինուորական նորաձեւութեանց մասին՝ նորա հնար զէնքերն ու եւրոպ. նոր զինուորական կազմակերպութիւնը մուտ գտած է ճառօնի մէջ, ինչպէս տեսանք Զին եւ Ծառօնական վերջին պատերազմին ատեն:



ԳՐԱԿԱՆ ՎԷՊ

ԺԻՒՆ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

— — —

(Շաբաթակուրթիւն 11րդ քիւնն)

— Ես ալ խորհեցայ, ըսաւ հօրեղբայրս պարզապէս:

Ի՞նչ ըսել կ'ուզեր: Բանականութեան ձա՞յնն էր որ կը խօսեր իր մէջ: Ծրագիրները յետաձգելու միտք ունէր: Ի՞նչ աղուոր բան կ'ըլլար: Պահ մը լուռութենէ վերջը մինչ չէի համարձակեր հարցում մը ընել, յարեց:

— Ես ալ մտածեցի այդ կարեւոր կէտին վրայ, որովհետեւ չեմ ուզեր անխոհեմաբար վարուիլ:

— Անշուշտ, պատասխանեցի ոյժգին:

— Վեց հարիւր տարիէ ի վեր Սնէֆէլս համր է, բայց կրնայ ըլլալ որ մէկէն ի մէկ խօսի: Արդ, ամէն բոլորեցումէ առաջ լուռ ճշդուած կարգ մը երեւոյթներ տեղի կ'ունենան: Արդ, բնակիչները հարցաքննեցի, գետինը զննեցի եւ կրնամ ըսել թէ, Աքսէլ, բոլորեցում տեղի չպիտի ունենայ:

Քար կտրեցայ:

— Խօսքիս վրայ կը կասկածի՞ս, ըսաւ հօրեղբայրս, լս'ւ, հետո եկուր:

Մեքենաբար հնազանդեցայ: Հօրեղբայրս սկսաւ յառաջանալ տեսակ մը դաշտի մէջ, եթէ կարելի է դաշտ անունը տալ այս քարերու եւ սլաքայթի կտորներու կոյտին:

Անդին ասգին ջերմուկներու արձակած շոգին կը նշմարուէր, որոնք ուժգին օդին մէջ կը տարածուէին: Ասոնք տեսնելով վախս աւելի շտտցաւ:

— Կը տեսնե՞ս այս շոգիները, Աքսէլ, հասկցիր հիմա թէ ալ վախնալու բան չունինք:

— Ինչո՞ւ համար, դռչեցի:

— Ասիկա աղէկ միտքդ պահէ. բոլորեցումէ քիչ առաջ, այս ջերմուկները աւելի կատաղի երեւոյթ մը կ'առնեն ու բոլորովին

կը ջնջուին, որովհետեւ ամէնը միասին խառնարանին մէջ կը հաւաքուին դուրս ելլելու համար: Եթէ այս շողիները միշտ իրենց սովորական պօրով թիւնը պահեն, եթէ դիտես որ հովին ու անձրեւին տեղ՝ ծանր ու հանդարտ օդ մը չընէր, կրնաս հետեւցնել թէ բորբոքում տեղի չալիտի ունենայ:

— Բայց...

— Բաւական է: Երբ գիտութիւնը կը խօսի, մեզի լսել կը մնայ:

Դիւրօս կախ ետ դարձայ, Գիտական առարկութիւններով հօրեղբայրս յաղթած էր ինծի: Բայց տակաւին յոյս մը կը մնար. եթէ խառնարանին յատակը իջնելով ստորերկրեայ ճամբայ մը չգտնէինք, աւելի խորը իջնել անկարելի կը դառնար:

Ամբողջ գիշերը մղձաւանջով անցուցի. հրաբուխներ կ'երազէի. ինքզինքս միջոցին մէջ նետուած կ'զգայի՝ հրային ժայռի մը պէս: Յաջորդ օրը մեկնեցանք հիւրամերձ քարոզիչին տունէն. բռնակիրները շաղկապէին մեր կարասիները, գործիքներն և ուտելիքը: Հօրեղբայրս ու ես մէյմէկ երկաթապատ գաւազան ու հրացան առած էինք: Հանս՝ շրջահայեացութեամբ տիկ մը ջուր աւելի առած էր:

Ժե.

Սնէֆէլսը հինգ հազար ոտք բարձրութիւն ունի և իր կրկնակ կոներով՝ կը վերջանայ խոտաքարային գօտիէ մը, որ կը զգիին լեռնագրական դրութենէն բոլորովին ազատ է: Մեր մեկնած կէտէն անկարելի էր տեսնել իր երկու գաղաթները, այլ կը նշմարէի ձիւնէ ահագին գտակ մը՝ հսկային ճակտին վրայ իջած:

Իրարու ետեւէ կը քալէինք, գլուխնիս ունենալով որսորդը՝ որ նեղ ճամբաներու մէջէ կ'անցընէր մեզի, անանկ որ իրարու հետ խօսիլ հնար չէր:

Սթաբիլ ծոցին պազալդէ պատէն անդին կ'սկսէր բուսական ու նեարդային կիզահողէ կազմուած դետին մը՝ մնացորդ թերակըզգիին ծանծաղուտներու նախնի բուսակոնութեան: Ձեռուցիչ նիւթի այս քանակը կը բաւէր ամբողջ դար մը բոլոր Իսլանտայի բնակիչները տաքցնելու: Սոյն կիզահողի ծածքը մինչեւ եօթանասուն ոտք բարձրու-

թիւն ունէր և կազմուած էր ծակոտ կիզաքարի թերթիկներով բաժնուած՝ կրացած բուսային մնացորդներէ:

Իբր ճշմարիտ եղբորդի Լիտէնպրօք ուսուցչապետին և հակառակ զիս պաշարող գաղափարներու. հետաքրքրութեամբ կը դիտէի այս բնապատմական ահագին աշխատանոցին հանքային շահագրգռութիւնները: Միեւնոյն ժամանակ մտքիս առջեւէն կ'անցընէի Իսլանտայի ամբողջ երկրաբանական պատմութիւնը:

Այս հետաքրքրաշարժ կղզին, յարաբերաբար նոր շրջանի մը մէջ ջուրերէն դուրս ելած է. կարելի է նոյն իսկ անգղայի շարժումով մը ջուրերէն վեր կը բարձրանայ: Եթէ աս իրաւ է, իր ծագումը ներքին հուրի մը ազդեցութեամբ եղած է: Որով Տաւիի տեսութիւնը, Սաքնիւսէմի ծածկագիրը, հօրեղբորս մտադրութիւնները, բոլորն ալ ջուր կ'իյնային: Ույն ենթադրութեամբ սկսայ ուշադիր հողին բնութիւնը քննել եւ շուտով հասկցայ թէ ի՞նչ երեւոյթներ իրաւութեամբ յաջորդելով այս կղզին ձեւացած էր:

Իսլանտա, մրրային հողերէ բոլորովին զուրկ, կազմուած է ամբողջովին հրաբխային կիզաքարէ, այսինքն ծակոտիէն կազմութիւն ունեցող քարերու եւ ժայռերու կոյտէ մը: Հրաբուխներուն գոյութենէն առաջ դրաբեան ժայռերու կոյտ մըն էր՝ որ կեդրոնական ճնշումներու տակ կամաց կամաց ջուրերէն դուրս ելած էր. ներքին հուրերը տակաւին դուրս պոռթկացած չէին:

Բայց ժամանակ յետոյ, կղզիին հարաւարեւմուտքէն դէպ ի հիւսիս-արեւելք լայն ձեղք մը բացուեցաւ, ուրիշ քիչ առ քիչ դուրս վազեց խոտաքարի ամբողջ զանգուածը: Դեռ երեւոյթը հանդարտօրէն տեղի կ'ունենար: Ծեղքը ահագին բացութիւն մը ունէր եւ հալած նիւթերը՝ երկրիս խորերէն դուրս նետուած, տարածուեցան ընդարձակ տարածութիւններու վրայ, տեղ տեղ ուռէցքներ ձեւացնելով: Այս միջոցին է որ երեւցան ֆէլտսրաթը, ծիրանաքարը և հատաքարը:

Բայց, ի շնորհս այս հոսումին, կղզիին թանձրութիւնը մեծցաւ՝ որով իր գիմադրելու ոյժն ալ շատցաւ: Երբ խոտաքարի կեղեւը պազելով ամէն ձեղք գոցուեցաւ, կրնաք երեւակայել թէ ի՞նչ ահագին քա-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԿՐԻՍՏՈՐԱԿԱՆ ԻՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԱՆԵՐԸ 1916, 1917 և 1918 թվականներին			
Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Տարեկանը 45 դահեկան
Վեցամսեան	20 »	Կ. ՊՈԼՍ	Վեցամսեան 25 »
Եռամսեան	10 »	ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ	Եռամսեան 12 1/2 »
ՌՈՒՍԻՆՈՑ ՀԱՄԱՐ		ԹԻԼԵԼԻ	
Տարեկանը	4 ընկալի	ԹԻԼԵԼԻ 61	ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ
			Տարեկանը 10 ֆրանք

Ձեռքի կը ծախուի հաւոր 40 փարսոյ

նակութեամբ կազ հաւաքուեցաւ իր կողերուն մէջ: Արդ հասաւ ատեն մը, որ փակեալ կազին մեքենական ոյժը այնքան աճեցաւ որ ծանր կեղեւը սկսաւ բարձրանալ և մէջտեղերը բարձր հնոցներ բացուեցան: Կեղեւի այս բարձրացումէն կազմուեցաւ հրաբուխը եւ անոր գագաթը ծակուեցաւ խառնարան մը:


Ասկէ վերջը բորբոքման երեւոյթներուն յաջորդեցին հրաբխային երեւոյթները: Նոր բացուած ծակերէն պաղալդի արտաքսումներ տեղի ունեցան՝ որու սքանչելի նմոշները տեսայ անցած դաշտերնուս մէջ, երբ կը քալէի այս ծանր՝ գոց մոխրագոյն ժայռերուն վրայէն որոնք պաղելով իրար փակած՝ վեցանկիւնի խարխալով բերեղներու ձեւով կաղապարուած էին:

Յետոյ, երբ պաղալդի ժայթքումը լմնացած էր, հրաբուխը, որու ոյժը աւելցած էր ուրիշ խառնարաններու փակուելովը, անցք տուաւ լաւաներու, հրաբխային կիզաքարերու, և հրաժէտ հանքային նիւթերու:

Թարգմ.

ԶԱՐԵՂ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



ՆԱԽԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Վէպիւր Բէօփիւր. — Յ. էֆ. Ս. Դ. — Ձեր հրահանգին համեմատ շրկուած էին արդէն. այս անգամ կրկին 1—7 և 4—7 թիւերը և 2 օրինակ Բուրաստան շրկուեցաւ: Պէտքով. — Խ. էֆ. Մ. Բ. — Խորին շընորհակալութիւն ձեր ազնիւ զգացմանց համար: 1—11 թիւերը շրկուեցաւ:

Երիզա. — Պ. էֆ. Ա. — Մէկ ծրարով կը շրկուի: Մէկ կամ երկու լեզուով՝ ձեզի համար տարբերութիւն չենք ըներ:

Սերաստիա. — Մ. էֆ. Ի. — Ստացանք շնորհակալ ենք: Վճարեցինք 50 շրուշը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր Ասանա, Յակոբ էֆ. Պօղոսեան Ասափազար, Ստեփան էֆ. Սափրիչեան Ամիրն Դարանիսար, Աշոտ էֆ. Պաղպաղեան Եսթկիւ, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան Խարբերդ, Ռուբէն էֆ. Զարդարեան Հալեպ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան Արվազ, Միհրան էֆ. Իսպիրեան Աիմ հանի Էօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Վեզիր Էօքրիւ » » » Տիարպէֆի, Լեոն էֆ. Սրապեան

Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար գիմեյ մինակ սոյն հասցէին

نشان بربریان مطبعه جی

استانبول اسکی ضبطیه جادوسی نورو ۱

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Էսկի Զապրիյէ Զասսէսի րիւ 61

NICHAN BERBERIAN
IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Eski Zabtiyé DjaddessiN. 61

ԱՐՏՈՒՏԷՐ — ԽՐԱԳՐԱՊԵՏ

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



1848

1848

1848

THE
OFFICE OF THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.


FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

FOR THE
RECORDS AND
GENERAL SERVICES
OF THE
UNITED STATES
DEPARTMENT OF THE
INTERIOR
WASHINGTON, D. C.

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւնները կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի էփս մթերք մը:

Ա Ժ Ս ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՋԱՌԱԿԱՆԱՑ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

Ս Ի Մ Օ Ե Զ Է Օ Մ Լ Է Ի Ժ Ժ Ա Ն

(ԺԻՐԱՅՐ ԴԵՐԱԿԱՅԻ)

Անհրաժեշտ ամէն վաճառականի, գրազրի եւ առուստուրով գրադողներու:

Գին Բ. Հատորի 12 ղրշ. — Կանխիկ վճարողներու համար զեղչ 15 0/0:

Դիմել ԹԵՐԹԻՍ հասցէին

Հրատարակուեցաւ Բ. Հատորի երրորդ տետրակը:

ԶԱՆՍԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՑԱՔԱՐԴԵՐՈՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ 100 հատը	7 ղշ.
Երկու » » » » »	9 »
Երեք » » » » »	11 »
Մէկ » ընտիր » » »	8 »
Երկու » » » » »	10 »
Երեք » » » » »	12 »
Ոսկեզօծ եղերքներով ընտիր թուղթ	16 »
» » գունաւոր » » »	17 »
» թրթրլը եղերք. ձերմակ » » »	17 »
» » » գունաւոր » » »	18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Րոզգա գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝ 12 ղրշ. աւելի ծախք մը վճարել պէտք է:

Հուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը 60 ղրշ.

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուիր: Վճարմունք կանխիկ են:

Հանրապիտակ ձեռքէ կը ծախուշի Պոլսոյ մէջ հատը 40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ:

Տպագրիչ եւ Փորագրիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

